# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 17

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Տուրքերի և Վճարների Մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ կետերով և « Տեղական Ինքնակառավարման Մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ;

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Այգավան համայնքում 2015թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարական (տեղադրման) թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար՝ 36000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհնուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4)Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2500 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2500 դրամ:

5) Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրը 1քմ-ի համար՝ 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ)Խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրքը սահմանել 3000 դրամ տարեկան:
6) Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24[00] –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000 դրամ,

գ) բաղնիքների (սաունաների) համար 200000 դրամ,

դ) խաղատների համար 1000000 դրամ,

ե) շահումներով խաղերի և վիճակախաղերի համար՝ 300000 դրամ:

7)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանվում է`

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ:

բ) թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2000 դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

8) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում` 2000 դրամ:

9 ) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայության իրականացնելու թույլտվության համար սահմանվում է 5000 դրամ:

10) Աճուրդ – վաճառքների և մրցույթների համար սահմանել վճար յուրաքանչյուր մասնակցից 1000 դրամ ;

11) Տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրքը սահմանել 30000 դրամ տարեկան:

12) Աղբահանության համար տեղական վճարը սահմանել ամսեկան յուրաքանչյուր շնչից 50 դրամ:

13) 1.2.3. կետերի դրույքաչափերը կիրառել 0.5 գործակցով:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 18

## ԱՅԳԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել մսուր-մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարը յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամ ամեն ամիս:

Կողմ -5　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ　　　ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 19

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Այգավան համայնքի գույքի գույքագրացուցակը համաձայն հավելվածի:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Այգավան համայնքի ավագանու
որոշման 05.12.2014թ

Այգավանի գյուղապետարանի գույքացուցակ

| ՀՀ | անվանում | քանակը | գինը | գումարը | Կապ նորոգում | մաշվածք | մնացորդ. արժեքը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գ/Պ շենք | 1 | 20217900 | | | 101090 | 20116810 |
| 2 | Կուլտ.տուն | 1 | 46437515 | | | 232188 | 46205327 |
| 3 | համակարգիչ | 1 | 189440 | | | 37888 | 151552 |
| 4 | Օդափոխիչ | 1 | 90110 | | | 18022 | 72088 |
| 5 | Համակարգիչ | 1 | 65540 | | | 13108 | 52432 |
| 6 | Քսերոքս | 1 | 55320 | | | 11064 | 44256 |
| 7 | Հեռուստացույց | 1 | 105490 | | | 21090 | 84400 |
| 8 | Սեղան համակարգչի | 1 | 15400 | | | 3080 | 12320 |
| 9 | մոնիտոր | 1 | 54400 | | | 10880 | 43520 |
| 10 | Գրասեղան մեծ | 1 | 51200 | | | 10240 | 40960 |
| 11 | Սեղան մեծ | 1 | 24570 | | | 4915 | 19655 |
| 12 | Սեղան լրագրի | 1 | 12290 | | | 2450 | 9840 |
| 13 | աթոռ | 2 | 57600 | | | 11520 | 46080 |
| 14 | գրասեղան | 1 | 17920 | | | 3580 | 14340 |
| 15 | Գրասեղան | 2 | 5120 | | | 0 | 5120 |
| 16 | Բազմոց | 1 | 31500 | | | 6300 | 25240 |
| 17 | Գրասեղան | 4 | 57380 | | | 11470 | 45910 |
| 18 | Պահարան | 1 | 28680 | | | 5730 | 22950 |
| 19 | Պահարան հագ. | 1 | 19400 | | | 3880 | 15520 |
| 20 | Գրապահարան | 1 | 1920 | | | 0 | 1920 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Չհրկիզվող պահ. | 4 | 6560 | | | 0 | 6560 |
| 22 | Հեռախոս սեղանի | 1 | 5720 | | | 0 | 5720 |
| 23 | Աթոռ | 12 | 49160 | | | 9830 | 39330 |
| 24 | Աթոռ պտտվող | 1 | 20500 | | | 4100 | 16400 |
| 25 | Աթոռ պտտվող մեծ | 1 | 35900 | | | 7180 | 28720 |
| 26 | Աթոռ | 2 | 30800 | | | 6160 | 24640 |
| 27 | Ավտոմեքենա | 1 | 8550000 | | | 427500 | 8122500 |
| 28 | Ջահ | 2 | 2048 | | | 0 | 2048 |
| 29 | Աթոռ | 12 | 128000 | | | 25600 | 102400 |
| 30 | օֆիսի բազմոց | 1 | 96000 | | | 19200 | 76800 |
| 31 | գրապահարան | 1 | 57600 | | | 11600 | 46000 |
| 32 | կշռատուն | 1 | 150370 | | | 7520 | 142850 |
| 33 | Չորանոց | 1 | 59160 | | | 2950 | 56210 |
| 34 | Պահեստ | 1 | 129450 | | | 6470 | 122980 |
| 35 | ալեհավաք | 1 | 13540 | | | 670 | 12870 |
| 36 | տաղիտ ճողեմ | 1 | 16000 | | | 3200 | 12800 |

Այգավանի գյուղապետ՝ Վ.Հարությունյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 20

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ , ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով,

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Այգավան համայնքի ավագանու
որոշման 05.12.2014թ.

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ - 14 - / 2015թ./

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Անվանում | Հաստիքային Միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 195000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 151000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 140000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 2 | 264000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 124000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 122000 |
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Օպերատոր | 1 | 116000 |
| Գործավար | 1 | 99000 |
| Գրադարանավար | 1 | 75000 |
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 79000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Պահակ | 1 | 80000 |
| Հավաքարար | 1 | 67000 |

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ